

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԱՆՆԱ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԼԻԶԻՆԳԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ ԼԻԶԻՆԳԱՏՈՒԻ ԵՎ ԼԻԶԻՆԳԱՌՈՒԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ֆինանսական լիզինգը լիզինգառուի կողմից ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում լիզինգի ժամկետի սկզբում արտացոլվում է որպես ակտիվ և պարտավորություն այն չափով, որը հավասար է ակտիվի իրական արժեքից և նվազագույն լիզինգավճարների զեղչված արժեքից ավելի փոքրին: Սովորաբար, լիզինգառուի կողմից կատարված լիզինգի պայմանագրի հետ ուղղակիորեն կապված սկզբնական ծախսումները ավելացվում են ակտիվի արժեքին:

Դիտարկենք հետևյալ օրինակը:

Ա ընկերությունը Բ ընկերությանը լիզինգով գյուղատնտեսական մեքենա է տրամադրում, որի իրական արժեքը 5.000.000 դրամ է: Բ ընկերությունը հինգ տարվա ընթացքում տարեկան վճարելու է 1.200.000 դրամ: Հինգերորդ տարվա վերջում այդ մեքենայի հաշվարկային մնացորդային գումարը կկազմի 500.000 դրամ: Պայմանագրի կնքման հետ ուղղակիորեն կապված ծախսերը ընդունենք հավասար զրոյի՝ հաշվարկների պարզեցման նպատակով: Գործարքի տոկոսադրույքը պետք է լինի այնպիսին, որպեսզի լիզինգավճարների և մնացորդային գումարի զեղչված արժեքների գումարը հավասար լինի ակտիվի իրական արժեքին: Այդ տոկոսադրույքը 13.48%-ն է, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

Լիզինգային գործարքի տոկոսադրույքի հաշվարկ

Տարի	Կապիտալացվող գումարը ժամանակաշրջանի սկզբին(հազ.դր.)	Լիզինգավճար (հազ.դր.)	Կապիտալացվող գումարը ժամանակաշրջանի ընթացքում(հազ.դր.)	Տոկոսադրույք՝ 13.48% (հազ.դր.)	Կապիտալացվող գումարը ժամանակաշրջանի վերջում(հազ.դր.)
2011	5 000	1 200	3 800	512	4 312
2012	4 312	1 200	3 112	420	3 532
2013	3 532	1 200	2 332	314	2 646
2014	2 646	1 200	1 446	195	1 641
2015	1 641	1 200	441	59	500
Ընդ.		6 000		1 500	

Այսինքն 13.48%-ն այն տոկոսադրույքն է, որը կիրառելիս լիզինգավճարների (6.000.000) և մնացորդային գումարի (500.000) զեղչված արժեքների գումարը հավասարվում է ակտիվի իրական արժեքին՝ 5.000.000 դրամ (տե՛ս աղյուսակ 2): Լիզինգավճարների զեղչված արժեքը կազմում է 4.734.000 դր. (5.000.000 – 266.000), որը գրեթե հավասար է ակտիվի իրական արժեքին, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ մենք գործ ունենք ֆինանսական վարձակալության (լիզինգի) հետ:

Աղյուսակ 2

Լիզինգավճարների և ակտիվի մնացորդային գումարի զեղչված արժեքների հաշվարկ

Վճարման տարին	Վճարման գումար/ մնացորդ. գումար	Զեղչված արժեքի հաշվարկման բանաձևը	Զեղչված արժեքը
0	1200	1 200	1 200
1	1200	$1\,200/(1+0.1348)$	1 057
2	1200	$1\,200/(1+0.1348)^2$	932
3	1200	$1\,200/(1+0.1348)^3$	821
4	1200	$1\,200/(1+0.1348)^4$	724
5	500	$1\,200/(1+0.1348)^5$	266
	Ընդամենը		5 000

Լիզինգառուի կողմից լիզինգատուին կատարված վճարումները բաղկացած են երկու մասից՝ ֆինանսական ծախս և չմարված պարտավորության նվազեցում: Ֆինանսական ծախսը պայմանագրի գործողության ընթացքում պետք է բաշխվի հաշվետու ժամանակաշրջանների միջև այնպես, որպեսզի չմարված պարտավորության հիման վրա հաշվարկված տոկոսադրույքը հաստատուն լինի բոլոր հաշվետու ժամանակաշրջաններում: Ֆինանսական ծախսերը հաշվետու ժամանակաշրջանների միջև բաշխվում են հետևյալ կերպ.

Աղյուսակ 3

Լիզինգառուի ֆինանսական ծախսի բաշխումը հաշվետու ժամանակաշրջանների միջև

Տարի	Պարտավորությունը ժամանակաշրջանի սկզբին(հազ.դր.)	Վճարում (հազ.դր.)	Պարտավորության մնացորդային գումար (հազ.դր.)	Ֆինանսական ծախս, տարեկան 13.48% (հազ.դր.)	Պարտավորությունը ժամանակաշրջանի վերջում(հազ.դր.)
2011	4 734	1 200	3 534	476	4 010
2012	4 010	1 200	2 810	379	3 189
2013	3 189	1 200	1 989	268	2 257
2014	2 257	1 200	1 057	143	1 200
2015	1 200	1 200	0	0	0
	Ընդամենը	6 000		1 266	

Ինչպես տեսնում ենք օրինակից, ֆինանսական ծախսը հավասար է 1.266.000դր., որն իրենից ներկայացնում է լիզինգավճարների գումարը՝ հանած այդ լիզինգավճարների զեղչված արժեքը (6.000.000 – 4.734.000):

Լիզինգային պարտավորության հաշվեկշռային արժեքը ստանալու համար միշտ պարտավորության մնացորդային գումարին ավելացնում ենք ֆինանսական ծախսը և նվազեցնում կատարված վճարումները (տե՛ս աղյուսակ 3):

Լիզինգային պայմանագրի ժամկետի սկզբում պարտավորությունն ու ակտիվը ճանաչվում են հավասարաչափ: Ինչպես արդեն վերը նշվել է, անմիջապես լիզինգի պայմանագրի հետ կապված ծախսումները, այնպես, ինչպես որ հիմնական միջոցների ձեռքբերման դեպքում է, ավելացվում են ակտիվի արժեքին:

Ֆինանսական վարձակալության արդյունքում առաջանում են մաշվածության կամ ամորտիզացիոն (ոչ նյութական ակտիվների դեպքում) ծախսումներ, ինչպես նաև ֆինանսական ծախս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար: Լիզինգով վերցված

ակտիվների ամորտիզացիոն կամ մաշվածության մասհանումների քաղաքականությունը չպետք է հակասի կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների մաշվածության կամ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների իրականացման քաղաքականությանը: Եթե հիմքեր կան ենթադրելու, որ պայմանագրի գործողության ավարտին, ակտիվի սեփականության իրավունքն անցնելու է լիզինգառուին, ապա որպես ակտիվի օգտագործման ժամկետ պետք է ընտրել օգտակար տնտեսական ծառայության ժամկետը: Եթե նման ենթադրություն անելու հիմքեր չկան, ապա որպես ակտիվի օգտագործման ժամկետ վերցվում է պայմանագրի գործողության ժամկետից և օգտակար տնտեսական ծառայության ժամկետից նվազագույնը:

Քանի որ վարձակալության ծախսերը և մաշվածությունը պետք է հաշվարկվեն իրարից անկախ և դժվար էլ, թե համընկնեն, սխալ կլիներ լիզինգային վճարումներն ուղղակիորեն համարել տվյալ ժամանակաշրջանի ծախս (տե՛ս աղյուսակ 4): Մեր նկարագրած օրինակում ակտիվի մաշվածության գումարը ստանալու համար անհրաժեշտ է ակտիվի հաշվեկշռային արժեքը հավասարաչափ բաշխել վարձակալության ժամկետին (մաշվածության հաշվարկման գծային մեթոդ): Քանի որ լիզինգավճարների զեղչված արժեքը՝ այն է 4.734.000դր., ավելի փոքր է, քան ակտիվի իրական արժեքը՝ 5.000.000դր., հետևաբար ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է հավասար լինի լիզինգավճարների զեղչված արժեքին՝ 4.734.000դր.: Երբ այն բաժանենք լիզինգային պայմանագրի ժամկետին՝ 5 տարի, կստանանք մաշվածության տարեկան ծախսը՝ 946.812դր.:

Աղյուսակ 4

Վարձակալության գծով տարեկան ընդհանուր ծախսի հաշվարկը

Հաշվետու տարի	Ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջում (հազ.դր.)	Պարտավորության հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջում (հազ.դր.)	Եկամուտների և ծախսերի հաշվետվ.-ում արտացոլված ընդհանուր ծախսը (հազ.դր.)	Լիզինգավճարներ (հազ.դր.)
2011	3 787	4 010	1 423	1 200
2012	2 840	3 189	1 326	1 200
2013	1 894	2 257	1 215	1 200
2014	947	1 200	1 089	1 200
2015	0	0	947	1 200
	Ընդամենը		6 000	6 000

Լիզինգային գործարքի դեպքում *լիզինգատուն* պահպանում է սեփականության իրավունքը, սակայն փոխանցում է ակտիվի հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու հատուցումները լիզինգառուին լիզինգավճարների դիմաց: Հետևաբար, ըստ էության, լիզինգատուն իրականացնում է ֆինանսավորում և փոխարենն ակնկալում շահույթի ստացում:

Համաձայն ՀՀՍՄ 17 «Վարձակալություն» ստանդարտի, ֆինանսական վարձակալության դեպքում, լիզինգատուն պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում լիզինգով տրամադրած ակտիվն արտացոլի որպես դեբիտորական պարտավորություն լիզինգում կատարած գուտ ներդրումների չափով: Լիզինգի պայմանագրի հետ կապված ուղղակի սկզբնական ծախսումները, օրինակ՝ միջնորդավճարներ, իրավաբանական ծառայությունների դիմաց վճարումները և այլն, ներառվում են գուտ ներդրումների գումարի հաշվարկում: Լիզինգից ստացվող ֆինանսական եկամուտը հաշվարկվում և համապարփակ ֆինանսական

արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանում՝ հիմք ընդունելով զուտ ներդրումների նկատմամբ հաստատուն տոկոսադրույքը:

Ո՞րն է ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումը:

Լիզինգատուի համախառն ներդրումները ֆինանսական վարձակալությունում իրենցից ներկայացնում են նվազագույն լիզինգավճարների հանրագումարը և երաշխավորված կամ չերաշխավորված մնացորդային գումարը, որի նկատմամբ լիզինգատուն իրավունք ունի: Չուտ ներդրումները իրենցից ներկայացնում են զեղչված համախառն ներդրումները: Չեղչման համար կիրառվում է պայմանագրում ենթադրվող տոկոսադրույքը: Ստացվում է, որ ցանկացած պահի զուտ ներդրումները հավասար են համախառն ներդրումներին՝ հանած ապագա հաշվետու ժամանակաշրջանների համախառն եկամուտը:

Այսպիսով, լիզինգային հարաբերությունների սկզբում լիզինգատուի զուտ ներդրումները հավասար են ակտիվի ինքնարժեքի և, իհարկե, ուղղակի սկզբնական ծախսումների գումարին: Համախառն և զուտ ներդրումների տարբերությունը իրենցից ներկայացնում է համախառն ֆինանսական եկամուտը, որը պետք է բաշխվի լիզինգային պայմանագրի գործողության ընթացքում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանների միջև: Ֆինանսական եկամուտը, որը պետք է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտացոլվի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, հաշվարկվում է լիզինգատուի զուտ ներդրումների նկատմամբ հաստատուն տոկոսադրույքով:

Մեր օրինակում լիզինգավճարների և ակտիվի մնացորդային արժեքի գումարը կազմում է 6.500.000դր., իսկ ակտիվի իրական արժեքը՝ 5.000.000դր., հետևաբար լիզինգատուի ֆինանսական եկամուտը կազմում է 1.500.000դր.: Դեբիտորական պարտքի սկզբնական հաշվեկշռային արժեքը հավասար կլինի ակտիվի իրական արժեքին, ինչն էլ իր հերթին հավասար է համախառն ներդրումների (6.500.000դր.) զեղչված արժեքին՝ որպես զեղչման տոկոսադրույք վերցնելով լիզինգային գործարքի տոկոսադրույքը՝ 13.48%:

Աղյուսակ 5

Լիզինգատուի դեբիտորական պարտքի հաշվարկ

Հաշվետու տարի	Դեբիտորական պարտքը ժամանակաշրջանի սկզբին (հազ. դր.)	Ստացված լիզինգավճարներ (հազ.դր.)	Ֆինանս. եկամուտ 13.48% (հազ. դր.)	Համախառն ներդրումները տարվա վերջում (հազ. դր.)	Ապագա ժամանակաշրջանների համախառն եկամուտ (հազ. դր.)	Դեբիտորական պարտքը ժամանակաշրջանի վերջում (հազ. դր.)
2011	5 000	1 200	512	5 300	988	4 312
2012	4 312	1 200	420	4 100	569	3 532
2013	3 532	1 200	314	2 900	254	2 646
2014	2 646	1 200	195	1 700	59	1 41
2015	1 641	1 200	59	500	-	500
		6 000	1 500			

Ինչպես երևում է աղյուսակ 5-ից, լիզինգատուի ֆինանսական եկամտի չափը կախված է նաև ակտիվի մնացորդային արժեքից, որը ակտիվի շահագործման ընթացքում պետք է պարբերաբար վերանայվի: Մնացորդային արժեքի փոփոխության դեպքում լիզինգատուն պետք է վերահաշվարկի ֆինանսական եկամտի բաշխումը հաշվետու ժամանակաշրջանների միջև:

Ի տարբերություն ֆինանսական վարձակալության, գործառնական վարձակալության դեպքում, համաձայն ՀՀՍՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի, վարձակալի կողմից վարձավճարները ծախս են ճանաչվում համապատասխան ժամանակաշրջաններում: Վարձատուն վարձակալության հանձնված ակտիվը շարունակում է հաշվառել որպես ակտիվ, իսկ ստացված լիզինգավճարները որպես եկամուտ են ճանաչվում:

Վերոնշյալ լիզինգային հաշվառման սկզբունքները, չնայած, տարիներ շարունակ չեն փոփոխվել, սակայն հաճախ քննադատությունների առիթ են տվել: Քննադատությունների հիմնական պատճառն այն է, որ վարձակալական գործարքների դասակարգումը ֆինանսական և գործառնական վարձակալությունների կարող է տանել նրան, որ նմանատիպ գործառնությունները բավականին տարբեր կերպ արտացոլվեն հաշվետվություններում: Ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների խորհուրդը (ՖՀՍԽ) և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդն այժմ աշխատում են լիզինգային գործարքների հաշվառումը կարգավորող ստանդարտի շուրջ, որը պետք է առաջարկի գործառնական և ֆինանսական վարձակալությունների հաշվապահական հաշվառման մեկ ընդհանուր մոտեցում: Խորհուրդները կարծում են, որ բոլոր լիզինգային գործարքները պետք է հաշվառվեն այն նույն սկզբունքով, որով հաշվառվում են ֆինանսական վարձակալության գործարքները, քանի որ երկու դեպքում էլ լիզինգառուն ձեռք է բերում ակտիվի օգտագործման իրավունքը՝ դրա դիմաց կատարելով համապատասխան վճարումներ, իսկ լիզինգատուն այդ վճարումների դիմաց հանձնում է ակտիվի օգտագործման իրավունքը լիզինգառուին:

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր տնօրեն

ԴՈՏԱՅԻԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումն է: Համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը: Դրանց ծախսման ուղղությունները սահմանում են ՏԻՄ-երը:

Ելնելով պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջև եկամուտների բաշխումից, ինչպես նաև համայնքային բյուջեներով կատարվող ծախսերի, դրանց ամրակցված սեփական եկամուտների և ընդհանուր հանրապետական հարկերի մասհանումների միջոցով ստացվող եկամուտների հարաբերակցությունից, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կառավարության համաձայնությամբ որոշում է դոտացիաների, սուբվենցիաների ու սուբսիդիաների չափերը, որոնք պետական բյուջեից հատկացվում են առանձին համայնքային բյուջեներին:

Դոտացիան՝ ֆինանսական օգնության կամ օժանդակության ձև է: Այն տրվում է ան-